ԹԵՄԱ 4 ԱՖՐԻԿԱ

ԴԱՍ 4.4. Աֆրիկայի տնտեսությունը

• • •

Դրանց ստեղծման հիմնական նպատակը առևտրի զարգացումն է, օտարերկրյա կապիտալ ներդրումների(ինվեստիցիաների) ավելացումը, աշխատատեղերի ստեղծումը, արդյունավետ կառավարումը, տեխնոլոգիական նոր մոտեցումների կիրառումը և տնտեսական կայուն զարգացման ապահովումն է: Գործարաններին խրախուսելու համար գոտում իրականացվում է որոշակի արտոնյալ հարկային և մաքսային քաղաքականության՝ հարկային խթաններ, ցածր սակագներ վճարելու հնարավորություն:

Ի տարբերություն զարգացած երկրների, զարգացող երկրներում ԱՏԳ-ների գործունեությունն ուղղված է դեպի արտաքին շուկա, քանի որ միայն արտահանման ծավալները մեծացնելով նրանք կարող են լուծել իրենց խնդիրները: Զարգացող երկրներում տիրապետողը օտարերկրյա մասնավոր կապիտալն է:Ներդրումները կատարվում են այն պայմանով, որ արտադրանքի 90%-ը արտահանվի: Սակայն ԱՏԳ-ների տնտեսական շահավետության կարևոր գործոններից մեկը դրանց ճիշտ տեղաբաշխումն է: Մի շարք զարգացող երկրներում, այդ թվում ՝ աֆրիկյան , ԱՏԳ-ներ ստեղծվեցին ցածր զարգացած երթակառուցվածքներով շրջաններում, խոշոր բնակավայրերից հեռու, վատ բիզնես միջավայրում, որոնք բավարար արդյունավետության չապահովեցին: Տարբեր ուսումնասիրություններ ցույց են տալիս , որ աֆրիկյան շատ քիչ երկրներ են (բացառությամբ Մավրիկոսի) հաջողություն գրանցել: